



115. ՎԱՐՊԵՏՈՐԴԻ ԴԱՏԱՎՈՐ

Դատավոր աչք կը թալե թուրք խորոտիկ կնկա մե, էրկու-իրեք վկա կը սարե, օր չիզան մահաքամեն, դատավորին ըսին:

— Մենք՝ ալլահի չառջև վկա ինք, օր կնկա մարդ կաներ էր զպա խուրլեն, զուր շրուխ հաներ էր ջերեն ու խուրլի դեմ ջուրջեռ կը թափեր:

Դատավոր ֆեթվա կը հանե, թե խուրլի դեմ ջուրջեռ թափող պտի թալախ տա՝ ուր կնկաց բաժվի:

էս հայուն, կնկա մարդ դընկնա դատավորի յետեեն, օր շարիաթի հակառակ րան մե դոնա, դթալախ ավրե, ուր կնիկ յետ առնե, ու էրկու-իրեք մուարլման վկա կը տանե մահաքամեն:

Վկաներ կըսին.

— Մենք՝ ալլահի չառջև վկա ինք, տեսանք, օր դատավոր կաներ էր դեմ խուրլին, զուր շրուխ հաներ էր ջերեն, ջուրջեռ կը թափեր:

Դատավոր շուրանա, կըսե.

— Օդո՛րդ է, ես կաներ ենք խուրլի դեմ, ջուրջեռ կը թափենք, հմա իմ շրուխ ծոեր ենք մեկ դիու վրա, հմալ օր դխուրլեն շըմ պըղծեբի:

Կնիկ կը մնա դատավորին:

Կնկա չառեջվա մարդ կըսե.

— Դավաճին<sup>1</sup> օր թե դատավոր էղնի՛, ալլահն օգնական, իմ կնիկ չէ, քառսուն կնիկ լե կոնա խլե:

<sup>1</sup> Դատախազ (Մ. Բ):

